ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 հունվարի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

2
(2668)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 2

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը 2022թ.-ի փետրվարի 23-ի կառավարության նիստում հայտարարեց, որ Վեդու ջրամբարի շինարարությունն ավարտին կհասցվի 2022թ.-ի տարեվերջին: Սանոսյանը երեք անգամ վստահեցրեց մինչեւ տարեվերջ շինարարության ավարտի մասին: «Ամեն ինչ այդ ուղղությամբ է գնում. եթե այլ հանգամանքներ ի հայտ չգան մեզ հիմա ոչ հայտնի, ամեն ինչ նորմալ կընթանա, կավարտվի»,- հայտնեց Սանոսյանը: ՏԿԵ նախարարությունից, ի պատասխան CivilNet-ի հարցման, հայտնել են, որ կառուցման աշխատանքները ավարտական փուլում են, ջրամբարը պատրաստ է 91,4%-ով: Աշխատանքների իրականացման վերջնաժամկետը, սակայն, երկարաձգվել է, եւ նախատեսվում է ավարտել 2023թ.-ի ընթացքում՝ առանց հստակ ժամկետի: Ժամկետների խախտումը ՏԿԵՆ-ը պատճառաբանում է շինարարության ընթացքում առաջացած խոչընդոտներով, կորոնավիրուսով, ռազմական դրությամբ եւ այլ հանգամանքներով: ՏԿԵ նախարար Սանոսյանը Հանրային հեռուստատեսության «Լուրեր» հաղորդման հունվարի 3-ի ռեպորտաժում հայտնել է, որ ջրամբարը կգործարկվի 2023թ.-ի երկրորդ կիսամյակում: Փաստացի սա Վեդու ջրամբարի՝ մոտ տասնամյակ տեւած կառուցման արդեն երրորդ վերջնաժամկետն է. նախ այն պետք է ավարտվեր 2021թ.-ի մարտին, ապա պայմանագրի ժամկետը երկարաձգելուց հետո՝ 2022թ.-ի դեկտեմբերին, հիմա էլ ասում են, թե կավարտեն 2023թ.-ի ընթացքում: Ստացվում է՝ինչպես իր ղեկավարի դեպքում է, Գնել Սանոսյանը եւս կարողանում է այնպիսի հայտարարություններ անել, որոնք իրականություն չեն դառնում:

Երեկ՝ կեսօրից, ՀՀ պետական գրեթե ողջ համակարգը կանգ էր առել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ բարձրաստիճան պաշտոնյաները, համակարգիչների առջեւ նստած, հետեւում էին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ասուլիսին. աշխատանքը կասեցված էր: Հատկապես ուժային կառույցները թուղթ ու գրիչով են հետեւել ասուլիսին, որպեսզի անհրաժեշտության դեպքում վարչապետի մտքից իդեաներ որսան ու ընթացք տան ինչ-ինչ բարձրաձայնումների: Ինչպես հայտնի է, երկու տարուց ավելի Նիկոլ Փաշինյանը մամուլի ասուլիս չէր հրավիրում: Ինչպես ինքը՝ վարչապետը խոստովանեց, 2020թ.-ի պատերազմից հետո քաղաքականապես լարված վիճակ էր, եւ լրատվամիջոցների մեջ էլ քաղաքականացվածության մակարդակը բարձր էր, դրա համար ինքը խուսափել է հանդիպել իր երբեմնի գործընկերներին: Այդ առումով երեկվա ասուլիսը սպասված էր: Փաշինյանը, ինչպես նկատվեց, երկար էր պատրաստվել հարցերին. աշխատում էր հունից դուրս չգալ, ձայնը չբարձրացնել: Հասցրեց, սակայն, մի քանի լուրջ բացթողումներ անել. երբ հարցը դուրը չէր գալիս, ասում էր՝ տեղյակ չեմ: Օրինակ՝ այն մասին, որ «Ժողովուրդ» օրաթերթը արդեն շուրջ 160 համարներում ստերի շարք է հրապարակել՝ Փաշինյանի կողմից հայտարարված, տեղյակ չէր, տեղյակ չէր նաեւ իր թիմակիցների՝ կոռուպցիայի մեջ թաթախված լինելու մասին, տեղյակ չէր, որ իր թիկնազորի պետը հարվածել էր օպերատորին, գործն ինչ եղավ, եւ այսպես շարունակ… Ընդհանուր առմամբ, անկարող ղեկավարի տպավորություն թողեց նա երեկվա ասուլիսում:

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին տեղափոխող ավտոշարասյան կողմից վրաերթի ենթարկված Սոնա Մնացականյանի քրեական վարույթով հարցաքննված, ուղեկցող շարասյան ղեկավար Արթուր Սահակյանի ցուցմունքը: Այն շատ ուշագրավ է. երբ քննիչը Սահակյանից հետաքրքրվել է, թե ինչ հիմնավորմամբ է նշել, որ արագության պահպանման համար իր պատասխանատվությունը տարածվում է շարասյան տրանսպորտային միջոցների եւ դրանցում գտնվող անձանց անվտանգության վրա, պատասխանել է. «Այդ հիմնավորումները մեր աշխատանքային ծառայողական գործառույթներն են եւ դրանք կարգավորող իրավական ակտերը: Այդպիսի ուղեկցումների բնույթն էլ հենց կայանում է նրանում, որ պետք է ապահովվի շարասյան տրանսպորտային միջոցների եւ դրանում գտնվող անձանց անվտանգությունը»: Այսինքն՝ ավտոշարասյան արագությունը որոշվում է՝ վարչապետի անվտանգությունից ելնելով: Իսկ թե ինչ վտանգ կար Լեո-Պարոնյան փողոցների խաչմերուկում, որ պետք էր գերարագ շրջանցել՝ այդ թվում հողի կնոջը սպանելով, քննությունն այդպես էլ չի պարզել: Ողջ ցուցմունքից տպավորություն է, որ կարեւորը վարչապետին արագ տեղ հասցնելն է եղել, իսկ թե ով կհայտնվեր մեքենայի տակ, էական չէր: Հիմա կարեւորի մասին. ի՞նչ իրավական ակտի մասին է խոսքը: Հետաքրքիր է՝ գործը քննող ՀԿԳ քննիչ Ա. Ադամյանը ինչու հարց չի ուղղում, թե կոնկրետ որ իրավական ակտն է թույլ տալիս մարդկանց ոտնատակ անելով արագ սլանալ: Հավելենք, որ նման իրավական ակտ գոյություն չունի, եւ այդ մասին տեւական ժամանակ է, ինչ բարձրաձայնում է նաեւ Սոնա Մնացականյանի գործով պաշտպան Ռաֆֆի Ասլանյանը: ⇨ էջ 4



ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է անցյալ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին իրականացված օտարերկրյա ներդրումների ծավալները: Ըստ այդմ՝ ընդհանուր ներդրումները զգալի պակասել են՝ 2021 թվականի 9 ամիսներին իրականացված 156 մլրդ 396 մլն դրամից դառնալով 75 մլրդ 533 մլն դրամ: Նախորդ տարվա 9 ամիսներին կան երկրներ, որոնք իրենց ուղղակի ներդրումները հանել են երկրից: Հայաստանից Միացյալ Թագավորության արտահանած կապիտալը կազմել է 2 մլրդ 405 մլն դրամ: Օրինակ՝ Չինաստանը 54.1 մլն դրամի չափով իր կապիտալը դուրս է հանել Հայաստանից, փոխարենը Վրաստանն է ավելացրել ուղղակի ներդրումների ծավալները: Գերմանիան զգալի նվազեցրել է ուղղակի ներդրումների ծավալները. եթե 2020 թվականի 9 ամիսներին դրանք կազմել էին 43 մլրդ 25 մլն դրամ, ապա նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ուղղակի ներդրումները 6 մլրդ 602 մլն դրամ են եղել: Նիդերլանդները 20 մլրդ 246 մլն դրամի չափով իր կապիտալը նախորդ տարվա հունվար-սեպտեմբերին հանել է Հայաստանից: Տեղեկացնենք, որ ռուսական ներդրումների ծավալները Հայաստանից արտահանվել էին. Ռուսաստանի Դաշնությունը 2021 թվականի հունվար-սեպտեմբերին 7 մլրդ 727 մլն դրամի չափով կապիտալը դուրս էր հանել Հայաստանից, իսկ նախորդ տարվա 9 ամիսներին կատարել է 59 մլրդ 864 մլն դրամի չափով ներդրում: Նշենք, որ Նիկոլ Փաշինյանը տարբեր առիթներով ընդգծել է, որ մեր երկրում ներդրումների համար ստեղծվել են դրական պայմաններ, որովհետեւ Հայաստանում հաստատված է օրենքի առաջ բոլոր մարդկանց հավասարությունը, եւ շուտով ներդրումների բում է լինելու: Ինչպես տեսնում եք, հակառակ պատկերն է. ներդրողները փախչում են Հայաստանից:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ Է

Ազգային ժողովի նախկին պատգամավոր Անի Սամսոնյանն ասում է, որ Արցախի հարցին լուծում տվողը ո՛չ Ռուսաստանն է, ո՛չ Արեւմուտքը: «Լուծման բանալին Հայաստան-Ադրբեջան-Արցախ եռակողմ բանակցությունների, երկխոսության մեջ է»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասում է նա: Այս եւ այլ հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Աժ նախկին պատգամավոր Անի Սամսոնյանի հետ:

-Տիկին Սամսոնյան, արդեն մեկ ամիս է՝ Արցախը Հայաստանի հետ ճանապարհը փակ է, եւ Արցախը չի կարողանում կապ պահպանել ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ աշխարհի հետ: Մարդասիրական կոչեր, հայտարարություններ բազմիցս են եղել, բայց շոշափելի որեւէ արդյունք, արձանագրում չկա: Ի՞նչ գնահատական եք Դուք տալիս այս իրավիճակին:

-Այո, կան կոչեր, բայց պարզապես կոչերով հումանիտար ճգնաժամ չի լուծում: Հումանիտար ճգնաժամը ստեղծողին պատասխանատվության կանչելով են դա լուծում, եւ մեղավորը Ադրբեջանի Հանրապետությունն է: Այսօր միջազգային իրավունքը ստորադասվել է աշխարհաքաղաքական շահերին, եւ, ըստ էության, միջազգային կառույցները եւ ՄԱԿ-ը չեն կարողանում կատարել իրենց քայլերը, որովհետեւ նրա առաքելությունն այսուհետ բխում է պետությունների շահերից: Եթե այսպես շարունակվի, ապա կա վտանգ, որ միջազգային կազմակերպություններից ՄԱԿ-ը կարող է արժանանալ Ազգերի լիգայի ճակատագրին, երբ չկարողանան ճնշել ագրեսոր պետություններին: Հիմա այսպիսի իրավիճակում միջազգային կառույցներն են, եւ ես հույս չունեմ, որ նրանք կկարողանան բացել Լաչինի միջանցքը: Այս հարցը դարձել է բոլոր գերտերությունների շահարկման առարկան, բայց ոչ լուծման հարցը, այդ պատճառով այն դեռ կմնա փակ, քանի դեռ Հայաստան-Արցախ-Ադրբեջան երկխոսության եռանկյունու հիման վրա չվերսկսվի երկխոսություն, եւ չլուծվի այդ հարցը:

-Միջազգային հանրությանը ձե՞ռք է տալիս՝ փակ մնա Լաչինի միջանցքը:

-Նրանց ոչ թե ձեռք է տալիս, որ փակ մնա, այլ նրանք չունեն այդքան ժամանակ եւ գործիքակազմ, որ իրենք զբաղվեն կամ ճնշում գործադրեն Ադրբեջանի վրա, որ նրանք կատարեն իրենց պարտականությունները: Հայաստանից ոչինչ չունեն ստանալու այս երկրները, իսկ Ադրբեջանից ունեն, այդ իսկ պատճառով, ես նորից եմ կրկնում, չեմ տեսնում, որ կարող են լուծում տալ գերտերությունները: Հարցի լուծման բանալին Հայաստանի, Արցախի եւ Ադրբեջանի ձեռքերում է:

-Դուք ասում եք՝ պետք է հույսներս դնենք մեզ վրա եւ գնանք եռակողմ բանակցությունների ճանապարհով, սակայն Արցախից ասում են, որ բանակցություններ չկան: Դուք, փաստորեն, չեք բացառում, որ այդպիսի բանակցություններ կարող են լինել:

-Տեսե՛ք, հասարակական տրամադրությունները չեն կարող հակադրվել քաղաքական տրամադրություններին. դա անկարելի է, քանի որ հասարակությունը զգում է այլ բան, բայց քաղաքացիները եւ քաղաքական գործիչները, դիվանագիտությունը պետք է անեն այլ բան: Այո՛, հասարակությունը զգում է ֆիզիկական վտանգ, ատելություն, բայց սա չի նշանակում, որ քաղաքական իշխանությունները պետք է դրանից ելնելով ասեն, որ չի կարող լինել բանակցություն կամ երկխոսություն: Լավ կլիներ, որ այս պահին անհատ քաղաքական գործիչները չանեն հայտարարություններ եւ չձեռնարկեն այնպիսի քայլեր, որոնք կարող են ձախողել դրանք: Այս պահին անձնական փիառի հարց չէ:

-Սպասե՞լ, այսինքն, ռազմական գործողությունների:

Քաղաքականության մեջ եթե-ներով չեն խոսում, կիրառում են բոլոր գործիքակազմերը, որոնք կարող են տանել ճգնաժամի հանգուցալուծման: Նստել եւ ասել՝ եթե սա անենք, չի լինի, սխալ է: Պետք է գնալ այդ ճանապարհով, եւ կարծում եմ՝ երկխոսությունն ավելի ճիշտ է, քան իրար հանդեպ ատամ սրելը:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՁԳՈՒՇԱՆՈՒՄ ԵՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջերս՝ 2022-ի տարեմուտին ու 2023-ը մեկնարկելուն պես տարբեր նախարարություններ է այցելում, ինչի ժամանակ ոլորտի պատասխանատուներն ամփոփում են կատարած աշխատանքը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, Փաշինյանի այցին ընդառաջ, նախարարություններում անգամ օդն է կանգ առնում: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանի անվտանգությունն ապահովելու համար պատկան մարմինները նախարարություններում ստուգումների համալիր գործողություններ են իրականացնում: Ամեն ինչ մանրակրկտորեն է իրականացվում, կառավարական շենքեր անգամ վարժեցված շներ են տանում՝ պայթուցիկ նյութեր որոնելու համար: Շներով, սակայն, չեն բավարարվում, ու գործի են դնում նաեւ մետաղորսիչ հատուկ սարքեր: «Ժողովուրդ» օաթերթին հայտնի դարձավ նաեւ, որ Փաշինյանի՝ նախարարություններ այցերի օրերին կառավարական շենքերի հարակից շենք-շինությունների տանիքներին դիպուկահարներ էլ են նկատել: Փաստորեն, Փաշինյանի՝ «իքս» նախարարություն այցը ոչ միայն տվյալ նախարարության, այլ այդ շենքում տեղակայված մի քանի նախարարությունների աշխատանքն է կաթվածահար անում, քանի որ ուժային կառույցները մի ամբողջ օրը լարված մթոնոլորտ են ստեղծում, ինչ-որ բաներ սկսում փնտրել, որսալ, խոչընդոտում գերատեսչությունների բնականոն աշխատանքը: Կառավարության թիվ մեկ շենքից, ենթադրենք, կառավարության երրորդ մասնաշենք հասնելու համար, որոնց հեռավորությունն ընդամենը մի քանի մետր է, Փաշինյանն ուժայիններին ոտքի է հանում, նախարարության աշխատակիցների համար լարվածության մթնոլորտ ստեղծում, ինչ է թե ցույց տա, որ ինքն անարգել ուր ասես, կարող է գնալ: Անգամ շատ աշխատակիցների սենյակներում անձանոթ ուժայիններ են գնում, նստում, մինչեւ վարչապետի կարճատեւ հանդիպումն ավարտվի: Հ.Գ. Երեկ զգուշավոր իրավիճակ էր տիրում նաեւ Նիկոլ Փաշինյանի ասուլիսի ժամանակ: Որոշում էր կայացվել լրագրողներին մեկ տեղում հավաքել եւ բոլորին միանգամից ուղեկցել ասուլիսի վայր, մինչ այդ էլ կառավարության անցակետում բոլոր լրագրողներից վերցրել էին անձը հաստատող փաստաթղթերը, որոնք վերադարձվեցին միայն ասուլիսի ավարտից եւ շենքից դուրս գալուց հետո: Սա արարք է, որն արգելված է «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետով. «Արգելվում է անձնագիրը վերցնելը»:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՍԽԱԼՎՈՒՄ Է

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ հրավիրած իր ասուլիսի ժամանակ հայտարարեց. «2022թ.-ի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական վերջին սադրանքի եւ 2020թ.-ի 44-օրյա պատերազմի հետեւանքով անհետ կորած համարվող անձանց վայրը պարզելու համար որոնողական աշխատանքները շարունակվում են»:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով մեկնաբանություն խնդրեց Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանին, որը պարբերաբար բարձրաձայնում է այս հարցը: Թովմասյանը հայտնեց. «Ցավում եմ, որ երկրի վարչապետը չի տիրապետում նման կարեւոր տեղեկության կամ իմիտացիա է անում, թե ամեն հարցով զբաղվում է: Իրականում 44-օրյա պատերազմի հետեւանքով անհետ կորած համարվող մոտ 200 անձանց որոնողական աշխատանքները դադարեցվել են դեռեւս 2022 թվականի հունվար ամսից: Դադարեցվել է Ադրբեջանի միակողմանի որոշմամբ: Այս հարցը բազմիցս քննարկել եմ նաեւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի իմ գործընկերների հետ, ինչպես նաեւ տասնյակ ահազանգեր եմ ուղարկել աշխարհի տարբեր կառույցների եւ կենտրոնների, որոնք զբաղվում են մարդու իրավունքների հարցերով: Առ այսօր որեւէ դրական տեղաշարժ չկա: Լավ կլիներ, որ ասուլիսին պատրաստվելուց առաջ համապատասխան տեղեկությունները ճշտեր երկրի թիվ մեկ պաշտոնյան. անլուրջ է այս ամենը»:

ՏԱՐՎԱ ՍԿԻԶԲ

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

«Տարին սկսել եմ միջազգային բոլոր գործընկերներիս ուղղված գրություններով»,- հայտարարություն է տարածել Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Արձանագրել եմ, որ Արցախի Հանրապետության կառավարությունը, բավարարելով ադրբեջանական «էկոակտիվիստների» պահանջը, հայտարարել է, որ ժամանակավորապես դադարեցնում է հանքավայրի շահագործումը, մինչեւ միջազգային փորձաքննություն կիրականացվի, սակայն դրանից հետո եւս ճանապարհը չի բացվում, ինչն էլ ապացուցում է, որ ճանապարհի փակումը կրում է միմիայն քաղաքական բնույթ:

Միջազգային իրավասու կառույցների գործնական քայլերի բացակայության պայմաններում Ադրբեջանը շարունակում է միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտման, հայերի էթնիկ զտման եւ ցեղասպան քաղաքականության իրագործումը:

Ներկայացնելով առկա խնդիրների խիստ հրատապությունը՝ միջազգային գործընկերներիս խնդրել եմ.

- Ադրբեջանի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ՝ դադարեցնելու վերջինիս անմարդկային քաղաքականությունը,
- ձեռնարկել գործուն քայլեր՝ Արցախը Հայաստանին եւ ողջ աշխարհին կապող միակ ճանապարհը բացելու նպատակով:

Շեշտել եմ՝ վերոգրյալի կապակցությամբ իրենց գնահատականն ու գործուն քայլերը կարող են նպաստել 120.000 կյանքի փրկությանը:

Արձագանքներ եւ՛ կան, եւ՛ չկան. այդուհանդերձ, ես շարունակելու եմ օպերատիվ կերպով միջազգային հանրությանը տեղեկացնել տարածաշրջանում առկա իրավիճակը, որտեղ մարդու իրավունքները ուղղակիորեն ոտնահարվում են»:

ԲԱԽՈՒՄ Է ՀԲԱՀԲՈՒՄ

Զորավարժություններ չեն անցկացվի

ՀԱՊԿ-ը Հայաստանում խաղաղապահ զորավարժություններ չի անկացնի. այս մասին երեկ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է հայտարարել:

«ՀՀ պաշտպանության նախարարն արդեն իսկ ՀԱՊԿ միավորված շտաբին գրավոր տեղեկացրել է, որ մենք ՀՀ-ում նման զորավարժություններ անցկացնելն այս իրավիճակում նպատակահարմար չենք համարում: Եվ այդ զորավարժությունները ՀՀ-ում համենայնդեպս այս տարի չեն կայանա»,- ասել է Փաշինյանը՝ ի պատասխան Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության ավելի վաղ տարածած այն հայտարարության, որ Ռուսաստանի ցամաքային զորքերի ստորաբաժանումները մասնակցելու են Հայաստանում կազմակերպվելիք խաղաղապահ զորավարժություններին:

Ռազմական փորձագետ Կարեն Վրթանեսյանը որոշ ժամանակ առաջ դեռ մեզ հետ զրույցում տարօրինակ էր որակել հանգամանքը, որ Հայաստանում անցկացվելիք ՀԱՊԿ զորավարժությունների մասին մենք իմանում ենք ոչ թե ՀՀ ՊՆ-ից, այլ ՌԴ ՊՆ-ի կայքից:

«Ջուտ տրամաբանորեն Փաշինյանի իշխանությունը զորավարժության անվան ներքո կամ ինչ-որ ֆորմալ բան է անելու, կամ էլ պատճառներ են գտնելու՝ չանեն այդ զորավարժությունը»,- ասել էր նա:

Երեկ արդեն ռազմական փորձագետը ArmLur.am-ի հետ զրույցում Փաշինյանի երեկվա հայտարարությանն այսպիսի գնահատական տվեց. «Այդ հայտարարությունն այսպես եմ հասկանում. Փաշինյանն ընտրել է Ռուսաստանի հետ բախում հրահրելու ուղին: Այլ բացատրություն չունեմ»:

Ռուսաստանը պատրաստվում է պարզաբանել 2023 թ.-ին Հայաստանի տարածքում Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) զորավարժություններ անցկացնելուց Երեւանի հրաժարվելու մասին հայտարարությունը: Նիկոլ Փաշինյանի այս հայտարարությունից ժամեր անց РИА Новосты գործակալությունը վկայակոչել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովի խոսքերը:

«Սա Հայաստանի վարչապետի կողմից բավականին նոր հայտարարություն է: Կարծում եմ, որ ՀԱՊԿ-ի գծով գործընկերները կապի մեջ կլինեն, կհստակեցնեն Հայաստանի դիրքորոշման մանրամասները: Ամեն դեպքում, Հայաստանը մեր շատ մտերիմ դաշնակիցն է: Մենք կշարունակենք երկխոսությունը, այդ թվում՝ այն հարցերի վերաբերյալ, որոնք այժմ շատ բարդ են»,- ասել է Պեսկովը՝ մեկնաբանելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՍՊԱՍՈՒՄ ԷԻՆ

ԱՍՈՒԼԻՍ՝ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԱՆՑ

Երկու տարի ընդմիջումից հետո՝ երեկ, տեղի ունեցավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի ասուլիսը՝ լրագրողների մասնակցությամբ: Ասուլիսի հիմնական թեման հայ-ադրբեջանական հարաբերություններն էին, Լաչինի միջանցքի, ղարաբաղյան հակամարտության թեման:

«Կա պայմանավորվածության արձանագրում, որ Հայաստանը եւ Ադրբեջանը միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչում են՝ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա, բայց մեր մտահոգությունն այն է, որ Ադրբեջանի նախագահը վերջին շրջանում անընդհատ ասում է, որ ՀՀ-ն ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ենթադրում եմ՝ հղվելով Պրահայի փաստաթղթին, բայց չի ասում, որ Ադրբեջանն էլ ճանաչել է Հայաստանի տարածքային ամբողջականությունը: Այստեղ կարեւոր է նաեւ այդ հարցում պարզաբանում մտցնել. Ադրբեջանը ճանաչո՞ւմ է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը. եթե այո, Հայաստանի Հանրապետությունն էլ ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»,- պատասխանեց Փաշինյանը: Նա, սակայն, ուղիղ պատասխան չտվեց լրագրողի հարցին՝ ընդունելի՞ է Հայաստանի համար, որ Ղարաբաղը լինի Ադրբեջանի կազմում:

Անկլավների հարցը եւս ընդգրկված է լինելու դելիմիտացիայի եւ դեմարկացիայի քննարկումների մեջ. «Մենք էլ ունենք այդ թեման. Արծվաշենը կա, որը ՀՀ ինքնիշխան տարածքի մասն է, եւ որը այսօր Ադրբեջանի վերահսկողության ներքո է», - ասաց վարչապետը: Փաշինյանն անկլավների մասին առաջին անգամ հրապարակավ խոսեց անցած տարի՝ խորհրդարանական ընտրությունների ժամանակ՝ հայտարարելով՝ Ադրբեջանը դեռ նոյեմբերի 9-ի բանակցություններում է այս հարցը բարձրացրել, բայց իրենք այն ընդհանրապես հանել են: «Մենք շատ հստակ դիրքորոշում ենք արտահայտել, եւ այդ կետն ընդհանրապես հանվել է», - ասել էր Փաշինյանը նախընտրական հավաքի ժամանակ:

Ադրբեջանական կողմի հայտարարություններից դատելով՝ Բաքուն պահանջում է Տավուշի մարզի Վերին Ոսկեպար, Ներքին Ոսկեպար, Բաղանիս, Այրում, Խեյրիմլի, Սոֆուլու, Բարխուդարլու, Ղըզըլհաջըլը գյուղերը եւ Արարատի մարզում գտնվող Տիգրանաշենը՝ նախկին Քյարքին:

Պատասխանելով հարցին՝ արդյոք կոռուպցիոն ռիսկեր չի տեսնում, երբ Ազգային Ժողովի նախագահը հանգստի է մեկնում «Վիվարո» ընկերության սեփականատերերի ինքնաթիռով, Փաշինյանը պնդեց՝ այդ ընկերության՝ «շահումով խաղերի բիզնեսի գովազդի վրա դրվել են մի շարք սահմանափակումներ», եւ հիմա խաղադրույքների ոլորտում շատ լուրջ անկում կա: Լրագրողներից մեկի դիտարկմանը՝ պաշտոնանկություններ չեն լինում այն անձանց շրջանակում, որոնք, օգտագործելով պաշտոնեական դիրքը կամ ընտանեկան կապերը, հարստանում են 2018-ի հեղափոխությունից հետո, պետական գնումները շահում են իշխանությունների հետ կապ ունեցող անձինք, Նիկոլ Փաշինյանն, ըստ էության, չհամաձայնեց:

Հայաստանն առաջնային է համարում Լեռնային Ղարաբաղի հայության անվտանգության եւ իրավունքների ապահովման հարցը: «Եվ կարեւոր ենք համարում, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը լինի այն սուբյեկտը, որը կխոսի այդ բոլոր թեմաների մասին: Իրենք պետք է որոշումներ կայացնեն, եւ մենք իրենց կաջակցենք մեզ հասու բոլոր միջոցներով», - շեշտեց Նիկոլ Փաշինյանը:

Անդրադառնալով հարցին՝ ո՞րն է կարմիր գիծը, որն անցնելու դեպքում Փաշինյանը չի ստորագրի խաղաղության պայմանագիր Ադրբեջանի հետ, ասաց. «Եթե տեքստը չհամապատասխանի Հայաստանի Հանրապետության պետական շահերին»:

Ադրբեջանի նախագահն իր հերթին հայտարարել էր, որ Բաքվի եւ Երեւանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրման համար ստեղծված են բոլոր պայմանները: Պայմանագրի ստորագրումը Երեւանը մինչեւ տարեվերջ չէր բացառել, սակայն դա իրականություն չդարձավ:

Վերջին շրջանում մամուլը գրում էր Իրանից, Հնդկաստանից ռազմամթերք ձեռք բերելու մասին: Փաշինյանը նկատեց, որ ռազմական համալրման մասին հրապարակային պետք չէ խոսել: «Մեր տեսլականն այն է, որ միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները պետք է կատարվեն: Սա նաեւ մեծ հաշվով սադրանք է, որն ունի երկու նպատակ՝ առաջինը՝ կոտրել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքը՝ ապրելու սեփական տանը, եւ Հայաստանին ներքաշել ավելի մեծ սադրանքի մեջ: Այն միջազգային արձագանքը, որը կա, մենք պետք է փորձենք կապիտալիզացնել Լեռնային Ղարաբաղում՝ հենց Լաչինի միջանցքում: Այստեղ շատ կարեւոր է Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումը եւ ՌԴ խաղաղապահ զորախմբի գործունեությունը», - կրկին անդրադառնալով Լաչինի շուրջ ստեղծված իրավիճակին՝ ասաց Հայաստանի ղեկավարը:

Չնայած ՀԱՊԿ-ն այդպես էլ քաղաքական հայտարարություն չարեց Երեւանում կայացած գագաթնաժողովին եւ չդատապարտեց Ադրբեջանի սեպտեմբերյան ագրեսիան Հայաստանի նկատմամբ, վարչապետն անկեղծ ու դրական էր գնահատել գագաթնաժողովի քննարկումները, սակայն հենց դաշնակիցների քաղաքական հայտարարության բացակայության պատճառով նա հրաժարվել էր ստորագրել ՀԱՊԿ հռչակագիրը եւ Հայաստանին օժանդակություն ցուցաբերելու համատեղ միջոցառումների նախագիծը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԵՄ Է ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Իրանի խորհրդարանի նախագահ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Սահիբա Գաֆարովայի եւ Թուրքիայի խորհրդարանի նախագահ Մուստաֆա Շենթոփի հետ հունվարի 9-ին կայացած հանդիպման ժամանակ վերահաստատել է այն դիրքորոշումը, որ Թեհրանը Կովկասյան տարածաշրջանում սահմանների փոփոխություն թույլ չի տա:

«Մենք կարող ենք լավ հարաբերություններ ունենալ միմյանց հետ տարածաշրջանային եւ գլոբալ ասպարեզում, եւ որքան մտերիմ են տարածաշրջանի երկրները, այնքան ավելի լավ է տարածաշրջանի համար: Մենք չպետք է թույլ տանք, որ ոչ տարածաշրջանային երկրները միջամտեն այս ոլորտում: Մենք չենք ընդունի որեւէ աշխարհաքաղաքական փոփոխություն սահմանին (խմբ.՝ կովկասյան տարածաշրջանում)»,- ընդգծել է Ղալիբաֆը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Հունվարի 10-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունել է ԵՄ տեխնիկական գնահատման խմբի անդամներին՝ Մարչին Վիդռայի գլխավորությամբ: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորինը:

ԱԽ քարտուղարը, ողջունելով խմբի անդամների այցը Հայաստան, բարձր է գնահատել դեկտեմբերի 19-ին ավարտված ԵՄ դիտորդական առաքելության գործունեությունը եւ մեկ անգամ եւս վերահաստատել Հայաստանի պատրաստակամությունը՝ նպաստելու նոր քաղաքացիական առաքելության աշխատանքներին:

Կողմերն անդրադարձել են ԵՄ նոր քաղաքացիական առաքելության գործունեության շրջանակներին, դրա տեղակայմանը եւ քննարկել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ 3 ԲՈՒԺԱՌՈՒ

Կարմիր խաչը երեկ Արցախից Հայաստան է տեղափոխել 3 բուժառու: Տեղեկությունը ArmLur.am-ին հայտնեց ԿԽՄԿ պատվիրակության հաղորդակցման ծրագրերի ղեկավար Զառա Ամատունին:

Նշենք, որ մինչ այս Արցախի հիվանդանոցներից Հայաստան էին տեղափոխվել բուժման անհապաղ կարիք ունեցող 18 անձ, այդ թվում՝ երկու օտարերկրացի:

ՑՈՒՑՄՈՒՆՔ

ՀՂԻ ԿՆՈՋ ՄԱՀԸ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՎՏՈՇԱՐԱՍՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին տեղափոխող ավտոշարասյան կողմից վրաերթի ենթարկված Սոնա Մնացականյանի քրեական վարույթով հարցաքննված, ուղեկցող շարասյան ղեկավար Արթուր Սահակյանի ցուցմունքը:

2022 թվականի ապրիլի 26-ին՝ ժամը 18:05-ի սահմաններում, Լեռ-Պարոնյան-Պռոշյան փողոցների հատվածում Նիկոլ Փաշինյանի կառավարական ավտոշարասյան մեքենաներից մեկը վրաերթի է ենթարկել 28 տարեկան երիտասարդ հղի կնոջը՝ Սոնա Մնացականյանին, որը տեղափոխվել էր «Նաիրի» հիվանդանոց, որտեղ գիտակցության չգալով՝ մահացել է: Չհաջողվեց փրկել նաեւ պտղի կյանքը: Ականատես վկան լրագրողներին հայտնել էր, որ վրաերթից հետո շարասյունը հեռացել է, չի կանգնել՝ տուժածին օգնություն ցույց տալու համար: ՔԿ-ն եւս ի սկզբանե հայտարարել էր, որ վրաերթից հետո վարորդը հեռացել է ու միայն 2 ժամ անց վերադարձել:

Այդուհանդերձ, ՃՈ մայոր Արամ Նավասարդյանին մեղադրանք է առաջադրվել միայն ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով՝մահվան ելքով վրաերթի համար, իսկ դեպքի վայրը լքելու դրվագով՝ ոչ: Հետագայում գործի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը ցուցում է տվել լրացնելու մեղադրանքը՝ մեղադրանք առաջադրելով նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի 1-ին մասով, եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով որոշում կայացնել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն հարուցելու մասին: Քննիչը նախ առարկել էր, ապա ստիպված կատարել դատախազի ցուցումը, քանի որ առարկությունները մերժվել էին: Նավասարդյանի մեղադրանքը լրացվել էր, եւ կալանավորման միջնորդություն էր ներկայացվել դատարան, որը մերժվել է:

Նշենք, որ գործով անցնող միակ մեղադրյալը Արամ Նավասարդյանն է՝ Ծեծեմ Արամ մականունով հայտնի: Տուժող կողմը գտնում է, որ նախաքննությունն իրականացվել է խիստ սուբյեկտիվ եւ նախապես որոշված շրջանակներում, այսինքն՝ բացառապես ՃՈ վարորդի՝ մեղադրյալ Արամ Նավասարդյանի գործողությունների գնահատման ուղղությամբ, հետեւաբար քննության բազմակողմանիության մասին խոսք լինել չի կարող: Այս ողբերգական դեպքը դատարանում քննվում է, եւ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել քրեական վարույթով վկա, Նիկոլ Փաշինյանին ուղեկցող շարասյան ղեկավար Արթուր Սահակյանի ցուցմունքը, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Հարց

-Ձեր նախորդ ցուցմունքում նշել եք, որ դեպքի օրը Պարոնյան-Լեռ խաչմերուկում երթեւեկության կարգավորող Արամ Զորաբյանը գործողությունները հստակ չենք կարող նկարագրել, քանի որ նա Ձեր ուշադրության կենտրոնում չի գտնվել: Ձեր նախորդ ցուցմունքներում հայտնել եք, որ Ա. Զորաբյանը իր գործողությունները ճիշտ է կատարել: Նման պայմաններում, եթե ուշադրություն չեք դարձրել վերջինիս գործողություններին, ինչպե՞ս կարող եք նշել, որ նա իր գործը ճիշտ է կատարել:

Պատասխան

-Ձեր հարցին նախկինում էլ եմ պատասխանել, որ դեպքին նախորդող պահին Լեռ փողոցով երթեւեկող տրանսպորտային միջոցների համար թեեւ միացրած է եղել լուսացույցի թույլատրող ազդանշանը, սակայն այդ մեքենաների վարորդները չեն վերսկսել երթեւեկությունը, որից ելնելով էլ՝ ես կարող եմ միանշանակ նշել, որ կարգավորողը իր գործողությունները ճիշտ է կատարել: Այդ մասին է փաստում նաեւ այն, որ, բացի վրաերթի ենթարկված տուժողից եւ նրանից առաջ փողոցը հատող հետիոտնից, մյուս բոլոր հետիոտները չեն հատում Պարոնյան փողոցը: Բացի այդ, համացանցում տարածված տեսագրությունից էլ է ակնհայտ, որ Արամ Զորաբյանը այդ պահին կանգնած է ճիշտ դիրքով եւ համապատասխան ազդանշաններ է տալիս: Այդ հարցի հետ կապված ավելացնելու բան չունեմ:

Հարց

-Խնդրում եմ հայտնել՝դեպքի օրը տվյալ ուղեկցման համար շարասյան մեջ գտնվող, այդ թվում՝ Ձեր մեքենայի երթեւեկության արագությունը որքա՞ն է եղել: Դուք նվազեցնելու, արագացնելու եւ շարասյան մեջ գտնվող ավտոմեքենաների վարորդներին արագության վերաբերյալ ի՞նչ հրագանգներ եք տվել:

Պատասխան

-Կոնկրետ ուղեկցման ժամանակ տարբեր արագություններ են ընտրվում, որը որոշվում է պետական պահպանության ծառայության աշխատակիցների կողմից, եւ մեր կողմից պահպանվում է արագությունը, որը ուրիշ կոնկրետ դեպքում Արամ Նավասարդյանի կողմից եթե արագացվել է, ապա անզգուշության արդյունք է եղել: Այդ ուղեկցման ժամանակ պահպանվել է երթեւեկության արագությունը, ժամանակագրությունը շարասյան մեքենաների վարորդների կողմից, ուստի իմ կողմից այդ առումով հրահանգներ չեն եղել:

Հարց

-Ի՞նչ հիմնավորմամբ եք նշել, որ արագության պահպանման համար Ձեր պատասխանատվությունը տարածվում է շարասյան տրանսպորտային միջոցների եւ դրանցում գտնվող անձանց անվտանգության վրա:

Պատասխան

-Այդ հիմնավորումները մեր աշխատանքային ծառայողական գործառույթներն են, եւ դրանք կարգավորող իրավական ակտերը եւ այդպիսի ուղեկցումների բնույթն էլ հենց կայանում է նրանում, որ պետք է ապահովվի շարասյան տրանսպորտային միջոցների եւ դրանում գտնվող անձանց անվտանգությունը»:

Դատելով շարասյան ղեկավարի վերջին հարց ու պատասխանից՝ կարեւորն այն է, որ ՀՀ վարչապետին բան չլիներ, իսկ թե ով կընկներ տակը, էական չէ, ավելին՝ արագությունը որոշվում է՝ վարչապետի անվտանգությունից ելնելով: Իր ցուցմունքում Արթուր Սահակյանը նշում է, որ արագությունը որոշվում է՝ վարչապետի անվտանգությունից ելնելով, դրանք կարգավորող իրավական ակտերով: Իսկ ի՞նչ իրավական ակտի մասին է խոսքը: Հետաքրքիր է՝ գործը քննող ՀԿԳ քննիչ Ա. Ադամյանը ինչու հարց չի ուղղում, թե կոնկրետ ինչ իրավական ակտերի մասին է խոսքը. միգուցե չի տվել հարցը՝ շատ լավ գիտակցելով, որ նման իրավական ակտ գոյություն չունի: Տեւական ժամանակ է, ինչ Սոնա Մնացականյանի գործով պաշտպան Ռաֆֆի Ասլանյանը եւս բարձրաձայնում է, որ նման իրավական ակտ գոյություն չունի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԵՐՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ ԵՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ավարտվել է Աքորի գյուղի բնակչի սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի հանգամանքները: Մասնավորապես, 2022 թվականի օգոստոսի 15-ին որովայնի եւ կրծքավանդակի հրազենային վնասվածքներով «Ալավերդու բժշկական կենտրոն» է տեղափոխվել Լոռու մարզի Աքորի գյուղի բնակչի դին: Նույն ժամանակ հիվանդանոց է ընդունվել նաեւ Լոռու մարզի Հագվի գյուղի 54-ամյա բնակիչը՝ «գլխի պատռած վերքեր, ձախ ականակապճի վնասվածք, կրծքավանդակի սալջարդ» ախտորոշմամբ: Վերջինս հայտնել է, որ ինքը կրակել է Աքորի գյուղի բնակչի ուղղությամբ, որից հետո վերջինիս հարազատները ծեծի են ենթարկել իրեն: Իրականացված միջոցառումների արդյունքում ձեռք բերված փաստերով հիմնավորվել է, որ դեպքի նախորդ օրը հիշյալ անձինք պայմանավորվածություն են ձեռք բերել Հագվի գյուղի բնակչի կողմից իր տրակտորով Աքորի գյուղի բնակչին պատկանող խոտը հակավորելու շուրջ: 2022թ. օգոստոսի 15-ի առավոտյան Հագվի գյուղի բնակիչն իր տրակտորով ժամանել է Աքորի գյուղի բնակչին պատկանող հանդամաս, սակայն տեսնելով խոտի սակավությունը՝ հրաժարվել է հակավորել այն: Դրանից հետո Աքորիի բնակիչն օրվա ընթացքում զանգահարել եւ հայհոյել է Հագվիի բնակչին ու նրա ընտանիքի անդամներին, որից հետո նույն օրը՝ երեկոյան, վերջինս, տանից վերցնելով իր անվամբ հաշվառված «ԻԺ 39» մոդելի երկփողանի որսորդական ողորկափող հրացանը, գնացել է հանդամաս եւ վրեժխնդիր լինելու շարժառիթով, ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ երկու անգամ կրակել Աքորիի բնակչի ուղղությամբ՝պատճառելով մարմնական վնասվածքներ: Վերջինս ստացած՝կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներից մահացել է հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին: Քննությամբ պարզվել է նաեւ, որ տուժողի որդին եւ եղբորորդին, որոնք գտնվել են նշված վայրում եւ ականատես եղել դեպքին, ձեռքերով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել Հագվի գյուղի բնակչին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Հագվի գյուղի բնակչին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով: Որպես խափանման միջոց նրա նկատմամբ կիրառվել է կալանավորումը: Ինչ վերաբերում է Հագվի գյուղի բնակչին մարմնական վնասվածքներ հասցնելու դրվագին, ապա վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել տուժողի որդու եւ եղբորորդու նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ տուժողի հետ հաշտությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքով: Նախաքննությունն ավարտվել է: Հսկող դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը, եւ քրեական վարույթի նյութերն ուղարկվել են դատարան՝ըստ էության քննելու:

ԼՈՒՐԵՐ

ՔԱՇՔՇՈՑ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Վալտեր Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2022 թվականի հունիսի 18-ին՝ ժամը 03:30-ից մինչեւ 03:42-ն ընկած ժամանակահատվածում, «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության մասնաշենքի 1-ին հարկում՝ ընդունարանի եւ բժիշկների սենյակի մոտ գտնվող միջանցքում, վիճաբանել է հիշյալ ընկերության շտապ օգնության հերթապահ բժիշկ Կորյուն Ասրյանի հետ, քաշքշել նրա հագուստներից, դուրս քաշել միջանցք, այնուհետեւ 3-4 անգամ ձեռքերով հարվածել է վերջինիս դեմքին եւ կրծքավանդակին՝ պատճառելով ֆիզիկական ցավ, որն ուղեկցվել է բարձր աղմուկով, բարձր ձայներով եւ հիվանդանոցի աշխատակիցների բնականոն աշխատանքը խաթարելով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱ ՉԵՐԲԱԿԱԼՎԱԾ

Դեկտեմբերի 8-ին ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնել էր, որ անհայտ անձը հարմարեցված բանալիով մուտքի դուռը բացելու միջոցով մտել էր Բաշինջաղյան փողոցի իր բնակարան, սակայն իրեն տեսնելով՝ դիմել էր փախուստի. տեղեկացնում են ՀՀ ոստիկանությունից:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ Մաշտոցի բաժնի քրեական հետախույզների եւ քննչական բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների արդյունքում պարզվել է արարքը կատարողի ինքնությունը:

Կոտայքի մարզի Պռոշյան գյուղի 31-ամյա բնակիչը հունվարի 9-ին Երեւանի Արարատյան փողոցում հայտնաբերվել, գողության փորձ կատարելու հիմնավոր կասկածանքով ձերբակալվել եւ բերվել է ոստիկանության Մաշտոցի բաժին: Նա եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունվարի 9-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 62 դեպք, որոնցից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ՈՉ ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ

Տավուշի մարզի հեռավոր, սահմանամերձ Բարեամավան գյուղի բուժկետի տանիքն ավելի քան երկու տարի առաջ ուժգին քամուց պոկվել է, այդ ժամանակից մինչ այսօր անձրեւները, ձյունը լցվում են առողջապահական այդ շենք, որի հետեւանքով ստեղծվել է հակասանիտարական ահավոր վիճակ, այդ վատթարագույն պայմաններում է աշխատում տեղացի բուժքույրը, բարեկամավանցի բուժառուները բուժսպասարկում եւ դեղեր են ստանում: Երկու տարի առաջ ՌԴ Ստավրոպոլ քաղաքում բնակվող բարեկամավանցիները գումարներ են հանգանակել, որով կատարվել է Բարեկամավանի Մայիս Ղարաքեշիշյանի անվան միջնակարգ դպրոցի տանիքի նորոգումը:

Այն ժամանակ Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը որպես նախահաշվի գումար փոքր թիվ է ներկայացրել բարեգործներին, Ստավրոպոլի բարեկամավանցիների հանգանակած գումարը չի հերիքել, տանիքի նորոգումը չի ավարտվել, անձրեւաջրերը լցվում են դպրոցի շենքից ներս: Ստավրոպոլում բնակվող բարեկամավանցիների հանգանակած գումարով գնված շինանյութն առկա է դպրոցում, սակայն տանիքի նորոգումն ավարտելու համար վարպետներին եւ բանվորներին վճարելու գումար չկա: Գրավոր հարցումով դիմել եմ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումանին՝նրան հարցնելով, թե երբ, ֆինանսական ինչ միջոցներով են ավարտելու Բարեկամավանի միջնակարգ դպրոցի տանիքի նորոգումը եւ Բարեկամավանի բուժկետի տանիքի վերանորոգումը: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Բուժկետի հիմանորոգումն ընդգրկված է Միջազգային կարմիր խաչի 2023 թվականի ծրագրում: Բարերարների կողմից դպրոցի տանիքի հիմանորոգումն իրականացնելու համար աշխատավարձի ոչ ճիշտ հաշվարկի պատճառով աշխատանքներն ընդհատվել են, սակայն ձեռք բերված անհրաժեշտ շինանյութն ամբողջովն պահեստավորված է դպրոցի տարածքում, եւ, ըստ պայմանավորվածության, ամռանն աշխատանքները վերսկսվելու են»: Ենթադրում եմ, որ խոսքը վերաբերում է 2023թ.-ի ամռանը: Տավուշի մարզպետարանին ի՞նչն էր խանգարում Բարեկամավանի միջնակարգ դպրոցի եւ բուժկետի շենքերի տանիքները նորոգել անցած երկու տարում: Տավուշի մարզպետարանից ստացված տեղեկություններով՝ 2022 թվականին Տավուշի մարզպետարանի 80 աշխատակից, բացի համեմատաբար բարձր աշխատավարձերից, պետական բյուջեից որպես պարգեւավճար ստացել են ընդհանուր 59 միլիոն 462 հազար 700 դրամ: Պետական հիմարկներին ենթակա՝ սահմանամերձ Բարեկամավանի բուժկետի եւ դպրոցի տանիքները նորոգեն Կարմիր խաչը եւ բարեգործները, իսկ պետական բյուջեից պարգեւատրումները ստանան Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

2022 ԹՎԱԿԱՆ

ՀԿԵ-Ն ԱՊԱՀՈՎԵԼ Է ԲԵՌՆԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՃ

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության՝ 2022 թվականին իրականացված բեռնափոխադրումների ծավալը կազմել է 3,51 մլն տոննա, ինչը 14,1 %-ով գերազանցում է 2021 թվականի ցուցանիշը: Այդ մասին տեղեկացնում են ընկերության մամուլի ծառայությունից:

2021 թվականի համեմատ՝անցյալ տարի 15 %-ով ավելի ուղեւոր է փոխադրվել: Ընկերության ներդրումային ծրագիրն իրականացվել է ամբողջ ծավալով: Արտահանման հաղորդակցությունում փոխադրվել է 451 հազար տոննա բեռ, ինչը 12,5 %-ով գերազանցում է 2021 թվականի ցուցանիշը: Արտահանման բեռնափոխադրումների աճն ապահովվել է առավելապես արդյունաբերական հումքի եւ կոնտեյներային բեռների հաշվին: Տեղական հաղորդակցությունում փոխադրվել է 2 մլն 144 հազար տոննա բեռ, ինչը 3,3 %-ով գերազանցում է 2021 թվականի ցուցանիշը: Հիմնականում ցուցանիշի աճին նպաստել է արդյունաբերական հումքի փոխադրումների ավելացումը: Ներմուծման հաղորդակցությունում ապահովվել է 39,9 տոկոս աճ՝ ավելի քան 906 հազար տոննա, հիմնականում՝ երկաթուղում հացահատիկի, նավթալից եւ արդյունաբերական բեռների լրացուցիչ ծավալների ներգրավման հաշվին:

Երկաթուղային փոխադրումների գրավչության ավելացման հաշվին ավելացել է նաեւ ՀԿԵ-ի ուղեւորների թիվը: 2022 թվականին ընկերությունը փոխադրել է 501 հազար ուղեւոր, ինչը 15 %-ով ավելի է 2021 թվականի նույն ցուցանիշից: Միջազգային հաղորդակցությունում փոխադրվել է 58,2 հազար ուղեւոր, իսկ տեղական հաղորդակցությունում ՝442,7 հազար ուղեւոր:

Ընկերության ներդրումների ծավալը 2022 թվականին կատարվել է ամբողջությամբ՝ 3,8 մլրդ դրամ: Ենթակառուցվածքներում ներդրումները կազմել են մոտ 2,9 մլրդ դրամ, շարժակազմում՝ մոտ 900 մլն դրամ:

«ՀԿԵ-ի բեռնափոխադրումների ծավալի դրական դինամիկան վկայում է մեր աշխատանքի նկատմամբ տնտեսվարող սուբյեկտների վստահության աճի մասին: Բիզնեսի ավելի ու ավելի շատ ներկայացուցիչներ մեզ տեսնում են որպես հուսալի գործընկեր, որն ապահովում է բեռների երաշխավորված եւ ժամանակին առաքումը,- հայտարարել է ՀԿԵ գլխավոր տնօրեն Ալեքսեյ Մելնիկովը՝ ամփոփելով ընկերության 2022 թվականի աշխատանքի արդյունքները:- Ավելի ու ավելի շատ հյուրեր եւ Հայաստանի քաղաքացիներ են վստահում մեզ իրենց ժամանակը եւ անվտանգությունը՝ ճամփորդությունների համար ընտրելով երկաթուղին, ընդ որում՝ այս բոլոր ցուցանիշները մեր աշխատանքի միայն տեսանելի մասն են, որի տակ այսբերգի նման թաքնված է հազարավոր մարդկանց ամենօրյա ու տքնաջան հսկայական աշխատանքը»:

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՄԱՆԱՏԱԲԸ ԴԱՏՎՈՒՄ Է

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում, դատավոր Սամվել Մարդանյանի նախագահությամբ, ընթանում է Տավուշի մարզի Բերդ համայնքի Իծաքար գյուղի բնակիչ, 1992 թվականին ծնված Գեղամ Արթուրի Գինովյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի պայմանագրային զինծառայող, դասակի հրամանատար, ի պաշտոնե հնարավորություն ունենալով առնչվելու պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների եւ փաստաթղթերի, ինչպես նաեւ ռազմական բնույթի այլ տեղեկությունների հետ, լրտեսության, օտարերկրյա պետության ներկայացուցիչներին ռազմական բնագավառում պետական, ծառայողական գաղտնիք հանդիսացող եւ ռազմական բնույթի այլ տեղեկություններ հանձնելու, թշնամական գործունեություն իրականացնելու համար օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչին այլ օգնություն ցույց տալու եղանակներով կատարել է պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության: Գ. Գինովյանին մեղադրանք է առաջադրել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասով: Սույն հոդվածը, որպես պատիժ, նախատեսում է 15-20 տարի ժամկետով ազատազրկում կամ ցմահ ազատազրկում: Գ. Գինովյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Սույն քրեական գործով դատավարության հերթական նիստը կայացել է հունվարի 5-ին:

ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿՆԵՐ ՉԵՆ ԿԱՏԱՐԵԼ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ 2022 թվականին սոցիալապես անապահով բաժանորդների համար խմելու ջրի սակագինը եղել է նախկինի համեմատ անփոփոխ՝ 180 դրամ, իսկ մյուս բաժանորդների համար՝ 200,47 դրամ: Տավուշի մարզի սոցիալապես անապահով, ընտանեկան նպաստառու ընտանիքները «Ժողովուրդ» օրաթերթին բողոքել են, որ իրենք 2022 թվականին խմելու ջրի մեկ խորոնարդ մետրի հաշվով վճարել են 200,47 դրամ, վերջնահաշվարկներ չեն կատարվել, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից իրենց չեն վերադարձվել ավել մուծած գումարները: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանել է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 2023 թվականի սակագները, սոցիալապես անապահով բաժանորդների համար 2023 թվականին սակագինը պետք է մնա անփոփոխ՝ 180 դրամ, իսկ մյուս բաժանորդների համար սահմանված է 208,42 դրամ: Սոցիալապես անապահով բաժանորդները մտահոգված են, որ 2023-ին էլ իրենք ստիպված կլինեն խմելու ջրի համար վճարել չգեղչված սակագնով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿՈՉ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Երեսուն տարի առաջ Հայաստանի տնտեսության լրիվ քայքայումը սկիզբ դրեց գործազրկությանը, արտագաղթին, արտաքին կենսական կապերի ընդհատմանը եւ պետության սնանկացմանը: Հայաստանը ձեռք բերեց անկախություն, բայց ժողովրդի մեծամասնության համար կյանքի պայմանները դարձան անտանելի:

Մինչեւ այժմ շարունակվում է այդ անհույս վիճակի խորացումը, իսկ «սովի տրամաբանության» եւ մեր ղեկավարների վարած «ճկուն» արտաքին քաղաքականության հետեւանքով մենք զրկվել ենք ռեալ արտաքին օգնությունից:

Երկու՝ միմյանց թշնամի պետությունների հետ հնարավոր չի ունենալ նորմալ արտաքին հարաբերություններ, մանավանդ երբ նրանցից մեկի հետ կա ռազմական փոխօգնության պայմանագիր, եւ բացակայում է բարձր իդեալների վրա հենված սեփական, կայուն (ոչ ճկուն) արտաքին քաղաքականության պլատֆորմը:

Այսօրվա ցիվիլիզացիան թույլ պետություններին չի տալիս գոյատեւելու ոչ մի երաշխիք, խոստումները դիտվում են որպես անցողիկ ցանկություններ, ռեալ գործում են միայն կնքված փոխշահավետ պայմանագրերը:

Մեր դարավոր թշնամիները՝ Թուրքիան եւ Ադրբեջանը, նորից զորքով չոքել են մեր դռանը, եւ մենք ի վիճակի չենք դիմադրելու նրանց ագրեսիային. չունենք ժամանակակից զենքեր ու զինամթերք: Մենք կարիք ունենք արտաքին օգնության:

Մեր առաջնային եւ հրատապ խնդիրը այժմ հանդիսանում է հայ ժողովրդի ինքնության եւ հայրենիքի պահպանումը՝ կապված միջազգային հանրության կողմից ճանաչված երկրի սահմանների անձեռնմխելիության, բարեկեցության ստեղծման ու զարգացման գործընթացների հետ:

Ակնառու են հաշվարկվող փոքր ազգային ռեսուրսները, որոնք բավարար չեն եւ մեզ հնարավորություն չեն տա մոտ ապագայում հաղթահարել ստեղծված բարդ իրավիճակը միայնակ, սեփական ուժերով:

Այժմ Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) խիստ կարիք ունի հենման կետի, մի հզոր եւ զարգացած պետության օգնությանը, որպեսզի մեր հայրենիքը պահպանվի եւ զարգանա:

Մեզ ռեալ կերպով կարող են օգնել միայն Եվրոպական Միությունը (ԵՄ) եւ Ռուսական Ֆեդերացիան (ՌՖ): Նշված երկու միություններն էլ ունեն զարգացած հզոր տնտեսական ու ռազմական պոտենցիալ, քաղաքակրթական բարձր մակարդակ, հումանիզմ եւ հարգանք դեպի մյուս ժողովուրդները, որի հետեւանքով շահերի համընկման դեպքում նրանցից յուրաքանչյուրը կարող է ընդունել մեզ իր պետական կառույցի մեջ որպես սուբյեկտ, որպեսզի պահպանվի մեր հայրենիքը:

Մեզ անհրաժեշտ է բացահայտ ու կոնկրետ պայմանագրով միավորվել նշված միավորումներից որեւէ մեկի հետ, որը ավելի արագ եւ ավելի ռեալ պայմաններ կառաջարկի միավորման եւ օգնության համար:

Հաշվի առնելով Հայաստանում ստեղծված արտակարգ պայմանները՝ մենք պետք է միացյալ ուժերով, միայն հայ լինելու հիմքով, հայրենասիրության մղումով, առանց պաշտոններ ու աշխատավարձ պահանջելու, առանց անկարողներին մեղադրելու, հստակ, կոնկրետ քայլերով անհապաղ ազգին դուրս բերենք ստեղծված արտակարգ իրավիճակից:

Այժմ ժողովրդավարության պայմաններում մեր երկրի ճակատագիրը կախված է մեզանից, Հայաստանի բոլոր քաղաքացիներից: Հայ ազգը ինքը պետք է որոշի իր գոյատեւման խնդիրը: Այդ գործընթացը սկսելու համար մեզ հարկավոր է անցկացնել ազգային ՀԱՆՐԱՔՎԵ հետեւյալ հարցումով.

«Համաձա՞յն եք, որպեսզի ՀՀ կառավարությունը բանակցություններ վարի ԵՄ-ի եւ ՌՖ-ի հետ հետեւյալ խնդրով. հայ ժողովուրդը հանրաքվեի արդյունքով խնդրում է ընդունել ՀՀ-ն Ձեր կենտրոնացված պետական կառույցում (Միություն, Ֆեդերացիա) անվտանգության եւ զարգացման ապահովման նպատակով որպես սուբեկտ՝ պահպանելով իր ազգային ինքնությունը, լեզուն եւ տարածքը»:

Հարցաթերթիկի պատասխանը՝ ԱՅՈ կամ ՈՉ:

Դարերով պայքարած, իր ինքնությունը եւ գենետիկան պահպանած, ժամանակակից արժեքներ կրող ազգը, որի գրողները, կոմպոզիտորները, արվեստագետները տվել են կուլտուրայի շատ բարձրարժեք ստեղծագործություններ, որի կրթված անհատները առանց դժվարության հասնում են պրոֆեսիոնալ զարգացման միջազգային մակարդակի, իրավունք ունի գոյատեւելու եւ հասնելու կայուն, զարգացած, բարեկեցիկ կյանքի:

Ներկայիս սերունդը պետք է դեն նետի իր թմրած վիճակը, տեր կանգնի իր երկրին եւ միացյալ զորավիգ լինի հայրենիքին, ինչպես Սարդարապատում, որպեսզի մեր ազգը չդառնա տարագիր, ու ներկայիս սերունդը չհամարվի անպատասխանատու, մորթապաշտ եւ անճարակ:

1. Մեր հայրենիքը

Հայրենիքը բոլոր ազգերի համար գնալով դառնում է շատ կարեւոր անհրաժեշտություն, եւ մարդիկ ավելի երջանիկ ու վստահ են զգում, երբ գտնվում են իրենց սեփական կայացած, բարեկեցիկ հայրենիքում:

Հայրենիքում ապրելը շատ ավելի լավ է, հեշտ է ու հաճելի, քան օտարության մեջ: Մարդկության զարգացման պատմական այս փուլում մարդը միայն իր հայրենիքում կարող է ապրել միանգամայն երջանիկ եւ լիարժեք կյանքով: Լքելով հայրենիքը՝ մենք բոլորս սկսում ենք զերոյից՝ արագ կորցնելով մեր ինքնությունը, լեզուն, մշակույթն ու կենցաղը՝ միայն աշխատանք ունենալու համար:

Պետք է հիշենք, որ հայրենիքը մեր ընդհանուր տունն է, նրա պահպանման համար դարերի ընթացքում իրենց կյանքն են զոհել բազում հայորդիներ, եւ առանց նրա անհնար է պահպանել մեր ազգը, ապահովել նորմալ, բնականոն կյանք մեր ու հաջորդ սերունդների համար:

Փաստորեն, անկախության այս երեսուն տարիների ընթացքում մենք չկարողացանք ապահովել սահմանների կայունությունը, ստեղծել բավարար աշխատատեղեր, ապրելու համար բարեկեցիկ պայմաններ եւ արտադրել կամ ունենալ ժամանակակից զենքեր: Շարունակվում է արտագաղթը, պետությունը դեռեւս չի կայացել, մենք այժմ անպաշտպան ենք եւ չունենք որեւէ հենման կետ:

Պետության կայացման եւ զարգացման ուղիների որոնումները երբեք չդարձան քննարկման առարկա, այլ որոշվեցին մեր ոչ կոմպետենտ ղեկավարների միանձնյա եւ անբացահայտ որոշումներով, ինչը մեզ հասցրել է այսօրվա վիճակին, երբ մենք անկախության 30 տարիների ընթացքում ոչ թե զարգացանք ու կարողացանք կազմակերպել ներգաղթ, այլ հետ ընկանք մյուս ազգերից ու նվազում, փոքրանում ենք քանակով, որակով եւ տարածքներով:

Նոր սերունդի ներկայացուցիչները ցանկանում են լավ ապրել հենց այսօր. ինչ կլինի վաղը՝ շատ քչերին է հուզում: Հետագա սերունդների համար մտահոգվողներ չկան: Դա ստացել է համընդհանուր բնույթ եւ լայն տարածում է գտել նաեւ ղեկավարման բարձր ոլորտներում: Այդպիսի մթնոլորտը տագնապ է առաջացնում ազգի ապագայի նկատմամբ եւ պարտադրում է կտրուկ, ռեալ եւ անհապաղ միջոցների դիմել հայրենիքը փրկելու համար:

Մեզ առայժմ որոշ չափով օգնում է Ռուսական Ֆեդերացիան (ՌՖ), սակայն մեր վարած «ճկուն» քաղաքականության հետեւանքով, երբ մենք հաճախակի փարվում ենք ՌՖ-ի թշնամիների հետ, ՌՖ-ն հապաղում է լիարժեք օգնելուց՝ համարելով մեր վարմունքը դավաճանություն:

Մեզ հարկավոր է արագ եւ կտրուկ կողմնորոշվել արտաքին օգնության կամ հենման կետի ընտրության հարցում, որպեսզի չմնանք անպաշտպան, այլ ունենանք հենման կետ: Մեջտեղում մնալը կործանարար է, որովհետեւ մենք անպաշտպան ենք այժմ մեր դարավոր թշնամիների առջեւ, եւ նրանք իրենց նպատակները չեն թաքցնում:

Հենման կետը անմիջապես կապահովի երկրի սահմանների վստահ պաշտպանությունը, եւ մեկ տասնամյակից ավելի կարճ ժամանակահատվածում Հայաստանում կստեղծվի ընդհանուր բարեկեցություն, որը նաեւ սկիզբ կդնի երկրի զարգացմանը եւ հայրենադարձությանը:

Մեր ելակետը պետք է լինի հետեւյալը. բոլոր հայերը սիրում են իրենց, իրենց ընտանիքը, երեխաներին, բարեկամներին, ազգակիցներին, ինչ-որ չափով իրենց ազգը եւ, հետեւաբար, հայրենիքը: Այսօր դա է մեր միավորման հիմքը, որովհետեւ հայը երբեք չի սպանի մի այլ անձի միայն նրա հայ լինելու պատճառով:

Մենք, մոռանալով մեր ներքին գժտությունները, պետք է համախմբվենք եւ դուրս բերենք մեր՝ հազարամյակներով գոյատեւած ազգին ստեղծված չարագուշակ իրավիճակից:

Դարերով պայքարած, իր ինքնությունը եւ գենետիկան պահպանած, ժամանակակից արժեքներ կրող ազգը իր ներկայիս սերունդի սխալների հետեւանքով այսօր կանգնել է կործանման եզրին: Ազգը պետք է հավաքի իր ռեալ, հայրենասիրական ուժերը, ինչպես Սարդարապատում, եւ դուրս գա ստեղծված արտակարգ իրավիճակից:

Ժամանակակից սերունդը պետք է դեն նետի իր թմրած վիճակը եւ զորավիգ լինի իր հայրենիքին, որպեսզի մեր ազգը չդառնա տարագիր, ու մեր սերունդը իր հետնորդների կողմից չհամարվի անպատասխանատու, մորթապաշտ եւ անճարակ:

2. Օգնության հարցը

Մենք սիրում ենք մեր անհաջողությունների համար մեղադրել ուրիշներին՝ առանց հաշվի առնելու, որ ամեն մի երկիր ունի իր պրոբլեմները եւ պաշտպանում է իր շահերը: Մեր անհաջողությունների համար մենք պետք է մեղադրենք մեզ, այլ ոչ թե ուրիշներին. միայն այդպես մտածելով՝ մենք կարող ենք հասնել հաջողության:

Ամեն ազգ՝ որպես մեծ ընտանիք, պետք է ինքը հոգա իր խնդիրները, մտածի իր մասին եւ օգնության կարիքի դեպքում խնդրի ավելի ուժեղին, որ նա փոխշահավետ պայմաններով օգնի իրեն, եւ շնորհակալ լինի դրա համար: Անշնորհակալ վերաբերմունքը ազգերի կողմից հիշվում է երկար եւ չի մոռացվում:

Նշենք մի շատ կարեւոր եւ հայտնի փաստ. Հայաստանի Հանրապետությունը իր ժողովրդով հանդերձ ՍՍՌՄ-ի կազմում հասավ ժամանակակից բարձր զարգացման: Ժամանակակից զարգացման հայ ժողովուրդը չի հասել ոչ անցյալ դարերում եւ ոչ էլ անկախության այս երեսուն տարիների ընթացքում:

Անկախություն ստանալուց հետո ՀՀ կառավարությունը կարող էր ՌՖ-ի հետ ընդհատել ոչ շահավետ գործարքները, իսկ շահավետ գործարքներն ու պայմանագրերը շարունակել, սակայն մեր ոչ կոմպետենտ ղեկավարները ՌՖ-ի նկատմամբ բռնեցին ցուցադրական կոպիտ դիրք Արեւմուտքին հաճոյանալու համար: Նրանք, փաստորեն, արգելեցին ռուսաց լեզուն, կտրեցին բոլոր կենսական կապերը ՌՖ-ի հետ եւ դուրս մղեցին երկրից նրանց ներկայացուցիչների մեծ մասին: Դա մեր կողմից շատ անշնորհակալ քայլ էր եւ շատ նման էր երեխայի ըմբոստանալուն իր խնամակալի դեմ: ՌՖ-ն ըմբռնումով մոտեցավ փոքր երկրի մեծ սխալներին եւ աշխատեց ՀՀ-ի հետ իր համար շահավետ գործերը շարունակել: ՌՖ-ի դիրքը հուշում է, որ մենք առայժմ նրա հետ կարող ենք ունենալ փոխշահավետ համագործակցություն:

Արեւմուտքը, որի համար արվեց այդ բոլորը, մեր կառավարությանը շոյեց, բայց ոչ մի հարցում չօգնեց եւ չդարձավ մեզ հենման կետ, քանի որ Հայաստանի հետ նրանց համագործակցությունը տարբեր օբեկտիվ պատճառներով ձեռնտու չէ: Արեւմուտքին ձեռնտու է, որ Թուրքիան լինի ուժեղ, եւ Հայաստանը լինի նրա կազմում, այսինքն՝ չլինի, վերանա:

Այդ գիծը Արեւմուտքը կայուն կերպով տանում է վերջին 250 տարիների ընթացքում եւ չի փոխի այն նաեւ մոտ ապագայում, քանզի չի փոխվել դրա հիմքը՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի վախը Ռուսաստանի ազդեցության ուժեղացման նկատմամբ: Նրանք շարունակաբար համագործակցում եւ հրահրում են Թուրքիային Ռուսաստանի դեմ: Այդ հիմքի հիման վրա նրանք դարերի ընթացքում աշխատել են ռուս-թուրքական պայմանագրերը կազմել՝ ի օգուտ Թուրքիայի՝ հայկական տարածքները միացնելով Թուրքիային եւ անտեսելով հայերի իրավունքները Թուրքիայում:

Դարեր առաջ դրանում համոզվել են նաեւ մեր արտակարգ ազգանվեր անձինք, եւ նրանք գտնում էին, որ հայերին իրականում կարող է օգնել միայն Ռուսաստանը՝ Իսրաել Օրին, Հովսեփ Էմինը, Մովսես Սարաֆյանը, Հովհաննես Լազարյանը, Ստեփան Տեր-Սահակյանը եւ շատ ուրիշներ:

Պատմությունը փաստում է, որ, սկսած 1700թ. մինչեւ 1990թ., հայ ժողովուրդը եւ նրա ազգասեր մտավորականները հայրենիքը փրկելու միակ իրական դաշնակից դիտել են Ռուսաստանին՝ որպես զարգացած, քաղաքակիրթ եւ հզոր պետության:

Միայն 1991թ. լրիվ անկախություն ստանալուց հետո մեր ղեկավարների մոտ ցանկություն առաջացավ մնալ լրիվ անկախ՝ հույսը դնելով ժամանակակից ցիվիլիզացիայի ստեղծած միջազգային օրենքների եւ կազմակերպությունների վրա, որոնք առայժմ միայն անուժ իլյուզիաներ են: Ժողովրդական բարձր էյֆորիայի պայմաններում անցկացվեց «Անկախությանը՝ այո» հանրաքվեն:

Հանրաքվեի արդյունքով ՀՀ ղեկավար կազմը ստացավ անկախություն, իսկ գործող Սահմանադրության միջոցով ամրագրվեց անպատասխանատու ղեկավարման օրինական իրավունք:

Որքանով էին ճիշտ այդ քայլերը, այժմ մեզ հայտնի է: Արդյունքում հայ ժողովուրդը ընկավ սարսափելի կախման մեջ իր ղեկավարներից, եւ ժողովրդի համար հայրենիքում ապրելը ու գոյատեւելը դարձավ անտանելի:

ՀՀ հին եւ նոր ղեկավարները պետք է զգան իրենց մեծ պատասխանատվությունը ազգի եւ հայրենիքի գոյատեւման հարցի նկատմամբ, որպեսզի վաստակեն ապագա սերունդների համակրանքը ու չարժանանան նրանց անեծքին:

Ամեն մի սերունդ ազգի կյանքում ունի իր կարեւոր դերը եւ պարտականությունը ազգի կյանքը պահպանելու եւ շարունակելու գործում: Այսօրվա սերունդը պետք է ցուցաբերի զգոնություն, հնարամտություն ու պատասխանատվություն դարերից եկող Հայ ազգի գոյատեւման համար: Տեր կանգնի իր երկրին, չկորցնի մեծ դժվարություններով մեզ հասած հայրենիքը, լինի ռեալ եւ հաշվենկատ, խուսափի կործանարար էգոիստական իլյուզիաներից, որպեսզի շարունակվի ազգի կյանքը:

Չգրված Պատմական Ճշմարտություններ

Կան դարերի խորքից եկող սակայն չգրված եղելություններ ու օրենքներ, որոնք գործում են ուժի դիրքերից, սակայն բացատրվում են այլ հանգամանքներով: Ովքեր շատ թե քիչ ծանոթ են պատմությանը, նրանք գիտեն դա:

Հայտնի է որ մարդկության ամբողջ պատմության ընթացքում, հենց առաջին հնարավորության դեպքում, միշտ ուժեղ պետությունները գրավել են ավելի թույլերին: Պատմական բազմաթիվ փաստեր ապացուցում են,որ իրականում տարածքը երբեք չի պատկանել տվյալ վայրում ապրողներին, «Տարածքը միշտ պատկանել է նրա գրավողին կամ սահմանները պաշտպանողին»:

Այդ փաստը ակնառու է բոլոր նախկին իմպերիաների մոտ, ինչպես նաեւ շատ երկրներում, որտեղ խառը ապրում են տարբեր ազգերի ժողովուրդներ: Տարբեր ազգերի համատեղ ապրելը միշտ շատ ավելի հեշտացրել է այդ չգրված օրենքի իրագործումը:

Այդ մտածելակերպը, այդպիսի դրվածքը տրամաբանական կամ հումանիստական չի եւ հաշվի չի առնում բնիկ ժողովուրդների իրավունքները, սակայն այդ չգրված օրենքը համատարած փաստ է եւ բացի թուրքիայից գործել է եւ գործում է նաեւ շատ այլ երկրներում, ուժի եւ վաղեմության իրավունքներով:

Հայ ժողովրդի զբաղեցրած տարածքը, սկսած նախնադարից, հերթականորեն եղել է Պարսկաստանի, Սելեւկյանների, Հռոմի, Արաբների, Թուրք - սելջուկների, Ռուսաստանի իրավասության տակ: Հայերը միշտ պայքարել են, բայց անկախություն ստացել են միայն կարճ ժամանակահատվածներում ու դեպքերի բերումով:

Այժմ նույնպես մեր որոշ հարեւաններ Սովետական Հայաստանի տարածքը (այժմյան ՀՀ տարածքը) համարում են Ռուսական տարածք եւ այդ պատճառով սպասում են որ հայերը ավելի հեռանան Ռուսաստանից որպեսզի հարմար պահին գրավեն այն, հաշվի առնելով որ այսօրվա ցիվիլիզացիան «չի նկատում» այդպիսի գործողությունները, եթե դրանք համընկնում են իրենց շահերի հետ: Այսօրվա ցիվիլիզացիաի ռեալ կարգախոսն է՝ «Բարոյական է այն ինչը ձեռընտու է»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԿՈՉ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ (շարունակություն)

Թուրքիան, Ադրբեջանի հետ միասին, երբեք չի ճանաչել եւ այժմ էլ իրականում չի ճանաչում հայերին որպես հողի կամ տարածքի տեր: Թուրքերը չեն համարել հողի տեր նաեւ քրդերին ու անատոլիայում ապրող միյուս բնիկ ժողովուրդներին, որոնք արդեն ձուլվել են թուրքերի հետ:

Թուրքերը միշտ համարել են որ իրենց սահմանը կարող է լինել միայն Ռուսաստանի հետ եւ նրանց պատերազմների հաշտության պայմանագրերը, որտեղ շոշափվում է Հայաստանի տարածքը, կապված են միայն Ռուսաստանի հետ:

Թուրքերի համար անկախ հայաստանի տարածքը համարվում է գրավելու համար ազատ, իրենց նախկին տարածքը, որտեղ միայն վերջերս են անվանափոխվել թուրքական տեղանունները եւ որը իրենցից ուժի միջոցով խլել էր Ռուսաստանը:

Եթե հայերը մնան անպաշտպան, կամ հեռանան Ռուսաստանից, ապա թուրքերը այդ տրամաբանությամբ, հարմար պահին, անմիջապես հետ կգրավեն այն որպես իրենց նախկին տարածքը:

Թուրքիան, Ադրբեջանի հետ միասին, դարերով եւ այսօր էլ առանց թաքցնելու միայն այդ տեսանկյունից է դիտում ՀՀ տարածքը, ինչպես նաեւ մեր տարածաշրջանի անցյալն ու ապագան:

2. Անկախություն

Հայ ժողովուրդը բոլոր դարերում ձգտել է ունենալ «Ազատ -անկախ Հայաստան» եւ 1991 թվականին ստացավ այն: Սակայն շուտով պարզ դարձավ, որ ռեալ անկախություն ստացել են միայն ՀՀ-ի ղեկավարները, իսկ ժողովուրդը ընկել է սարսափելի կախման մեջ իր ղեկավարներից, որոնք չունեն գիտելիքներ եւ պատասխանատվության չափանիշներ իրենց գործունեության համար:

Անկախության սկզբնական տարիներին բազմաթիվ մարդիք կորցնելով աշխատանքը, կորցրեցրեցին նաեւ հույսը ապագայի նկատմամբ, մեծացավ անվստահությունը վաղվա օրվա նկատմամբ, ժողովրդի մեծ մասի համար ակնառու դարձավ անհատական սովի հնարավորությունը, որը սկսեց խիստ մտահոգել նրանց: Սովի հնարավորությունը մարդկանց մոտ առաջացրեց խուճապ եւ սկսեց գործել ինքնապահպանության բնազդը - «սովի տրամաբանությունը»:

Այդ տրամաբանությամբ խուճապահար ժողովուրդը սկսեց շատ ցածր գներով ($3000- 2 սենյակ, կենտրոնում) վաճառել բնակարանները եւ դուրս գալ երկրից: Սկսվեց մասսայական արտագաղթ, որը շարունակվում է մինչ այժմ: Ովքեր չեին կարող հեռանալ երկրից սկսեցին վաճառել պետական ունեցվածքը, ընտրական ձայները, պետական աշխատատեղերը եւ այլն, միայն թե փրկվեն: Մարդիք սկսեցին մտածել միայն այսօրվա համար: Ապագայի համար արդեն մտածող չկա:

Մեծ դժվարություններով պետական աշխատատեղեր ձեռք բերած անձինք (տեղական իշխանություններ, միլիցիա, բանակ, ընտրական սիստեմ, նախարարություններ) այլեւս չեն ցանկանում որ իշխանությունը փոխվի, որպեսզի չկորցնեն իրենց աշխատանքը, քանի որ նորերը այդ աշխատատեղերը կվաճառեն ուրիշներին: Այդպիսի մթնոլորտը շատ հեշտացնում է ղեկավարների վերընտրվելու, երկրում ցույցերը, բողոքները ճնշելու եւ կայունություն պահպանելու հնարավորությունը:

ՀՀ-ում գոյատեւելու խուճապը օգնեց նաեւ արտասահմանին:Նրանք սկսեցին հովանավորել որոշ անձանց եւ առաջավոր ուսանողներին, որպեսզի ծրագրավորեն նրանց իրենց խնդիրները լուծելու համար:

Այդ քաոսային վիճակը շարունակվում եւ խորանում է նաեւ այսօր:

Անկախությունը ավելի կարեվոր է ժողովրդի համար, որպեսզի չդառնա տարագիր, չկորցնի իր լեզուն, գենետիկան, կուլտուրան, սովորույթները, ունենա բարեկեցիկ կյանք, սակայն երկրի ղեկավար կազմի լրիվ անկախությունը պարտադիր պայման չի հանդիսանում: Ղեկավարները իրենց ֆունկցիաների մի մասը կարող են փոխանցել «միության» կենտրոնական ղեկավարությանը երկրում բարեկեցություն, զարգացում, կայունություն ապահովելու համար: Դա ապացուցում է նաեւ ժամանակակից իրողությունը:

Ժողովուրդը ազատ եւ անկախ է երբ գործում է ժողովրդավարությունը եւ ժողովրդի կարծիքը հաշվի է առնվում, կան բավարար թվով աշխատատեղեր, իսկ գործազուրկները ստանում են նպաստ; արդարադատության համակարգը գործում է հստակ եւ ազնիվ; բոլորը հավասար են օրենքի առջեւ ու ապահով են երկրի սահմանները:

Մեր ղեկավարների անկախության այս երկար ժամանակահատվածում ժողովուրդը այդպես էլ չստացավ դրանցից ոչ մեկը, իսկ ղեկավարները միշտ եղան լրիվ անկախ, անպատասխանատու իրենց գործունեության մեջ եւ միշտ ունեցան կայուն ցոփ կյանք:

Ինչպես ասվեց մեր անկախ ղեկավարները չեն ունեցել եւ չունեն ոչ մի պատասխանատվություն իրենց գործունեության համար: Լավ իմանալով մեր հիմնական Օրենսգիրքը նրանք միշտ համոզված են որ իրավունք ունեն անել ինչ որ ցանկանում են, առանց ժողովրդի կարծիքը հաշվի առնելու:

Մեր Կոնստիտուցիան լրիվ համապատասխանում է այդպիսի մտածելակերպի եւ գործունեության ոճի հետ, քանիվոր այնտեղ իշխանությունների գործունեությունը իրավակարգում է հետեւյալ անորոշ բառերով՝ «հնարավորության սահմաններում աջակցել, խթանել, խրախուսել, ձգտել, նպատակադրվել»: Այդ կերպ առաջացած եւ օրենքի ուժ ստացած անպատասխանատվության մթնոլորտը հնարավորություն է տալիս որ ցանկացած անձ «ղեկավարի» Հայաստանը:

Այս վիճակը համընկնում է ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանի նշած օրինակի հետ՝ «Ուղղաթիռի մոտ հավաքված բազմությանը հարցնում են՝ ովքեր կարող են վարել այս ուղղաթիռը, թող առաջ գան: Ոչ ոք չի առաջանում: Տալիս են երկրորդ հարցը՝ ովքեր կարող են ղեկավարել այս երկիրը, թող առաջ գան - բոլորը վազում են առաջ»: Այս ցայտուն օրինակը շեշտում է պատասխանատվության բացակայությունը երկրի ղեկավարման գործում:

Անկախությունը առաջի հերթին անհրաժեշտ է ժողովրդին:

3. Ի՞նչ է Ապահովում Այսօրվա Ցիվիլիզացիան

Այսօրվա առաջատար հանրությունը՝ ներկայիս ցիվիլիզացիան ճիշտ հասկանալով ու նշելով մարդկության ապագա զարգացման բարձր իդեալները եւ ուղենիշները դեռեւս չի կարողանում ռեալ կերպով տարանջատվել իր դարավոր, կիսավայրենի անցյալից ու իրականացնել այդ իդեալները, որոնցից առաջնայիններն են՝ բոլոր ազգերի ու երկրների համընդհանուր հավասարության սկզբմունքը (հավասար հնարավորությունների ապահովումը), բարիության ու մարդասիրության սկզբմունքը, անձի ազատությունը եւ ձգտումը դեպի պրոգրես:

Մեծ դժվարություններով կիսապահպանվող ազգերի հավասար հնարավորությունների սկզբմունքը, իհարկե կոչված չի ապահովելու ապրելակերպի հավասարություն: Ապրելակերպը կախված է տվյալ երկրի ռեսուրսներից եւ ունեցած հնարավորությունների էֆեկտիվ օգտագործումից: Ազգերը եւ անհատ մարդիք իրենց կարողություններով շատ տաբեր են եւ հավասար հնարավորությունների դեպքում նույնպես հասնում են տարբեր արդյունքների:

Ազգերի կարողությունների տարբերությունը հիմնականում բացատրվում է ազգերի ունեցած ներուժով որը նույնպես հավասար պայմանների դեպքում բերում է ազգերի տարբեր զարգացման աստիճանների: Այդ պատճառով առաջավոր եւ հզոր պտությունները պահպանելով հավասարության սկզբմունքը ոչինչ չեին կորցնի այլ միայն կշահեին: Սակայն դեռեւս ամեն մի ազգ մնում է իր ազգային շահերի պաշտպանության մարտիկը, հաշվի առնելով որ ժողովուրդները դեռեւս լրիվ չեն հասունացել հավասարության եւ արդարության սկզբմունքները արդար պահպանելու համար:

Առայժմ միջպետական հարաբերություններում ռեալ գործում է «Բարոյական է այն ինչը ձեռնտու է» չգրված կարգախոսը:

Այսօրվա ցիվիլիզացիան ապահովում է միայն մարդկության զարգացման բարձր իդեալների՝ իմացությունը, ձգտումը ու տարածումը, սակայն դեռեւս ոչ մի երկիր միջազգային հարաբերություններում չի ղեկավարվում եւ չի պահպանում այդ իդեալները:

Այսօրվա ցիվիլիզացիան թույլ պետություններին չի տալիս գոյատեվելու ոչ մի երաշխիք, խոստումները դիտվում են որպես անցողիկ ցանկություններ, ռեալ գործում են միայն կնքված փոխշահավետ պայմանագրերը:

4. Ազգի Ներուժը

Ազգի ներուժը նրա զարգացած, միջազգային բարձր պրոֆեսիոնալ մակարդակի հասած մարդկանց քանակն է՝ Գիտության, Կուլտուրայի, Տեխնոլոգիաների, Ալգորիթմների եւ Ծրագրավորման, Ֆինանսական, Առողջապահության, Միջազգային հարաբերությունների եւ Մենեջմենտի բնագավառներում: Ազգի ներուժը միշտ բացարձակ, քանակական մեծություն է եւ պետությունները ունեն այդ սատիստիկան:

Ներուժի մեծությունը հիմնականում կախված է՝ տվյալ երկրի բնակչության քանակից, կրթական սիստեմի որակից, երկրի զարգացման օրենքներից եւ իշխանությունների կողմից զարգացման լծակների ճիշտ ընկալումից ու կիրառումից:

Երկրում բարեկեցություն ու զարգացում ապահովելու համար ազգի ներուժը ազգի ունեցած ռեսուրսներից ամենակարեւորն է:

Միայն գիտելիքներով զինված մասնագետներն են հնարավոր դարձնում երկրի զարգացումը, ղեկավարվելով պլանավորված նպատակային ծրագրերով, ռեալ եւ արդար իրավական դաշտի առկայության պայմաններում: Այդպիսի պայմանների գոյության դեպքերում ինվեստորներ միշտ գտնվում են:

Զարգացած պետությունները մեծ ուշադրություն են դարձնում ազգի ներուժի աճին ու նաեւ պայմաններ են ստեղծում դրսից բարձրորակ մասնագետներ ընդունելու համար:

Մենք բոլորս դեռեւս դպրոցում տեսնում ենք, որ կան գերազանցիկ, լավ, միջակ եւ թույլ սովորող աշակերտներ, որոնք ունեն տարբեր ընդունակություններ: Հաշվի ենք առնում նաեւ որոշ անհատների մոտ ընդունակությունների զարգացման տարբեր ժամանակա-տարիքային հատվածների առկայությունը, սակայն միշտ մեծ հաջողությունների են հասնում ավելի շուտ զարգացողները, որովհետեւ մարդկանց ակտիվ գործունեության տիրույթը այժմ կազմում է մոտ 30-35 տարի, իսկ ուշ զարգացումը խանգարում, կամ կրճատում է այն:

Այժմ Հայաստանում «Ազգային Ներուժը» շատ փոքր է նույնիսկ հարաբերական կամ տոկոսային առումով, քանզի նրանց համար հայաստանում պահանջարկ չկա:

Կառավարությանը այդ հարցը երբեք չի մտահոգել, մեր կրթական սիստմը միջազգային չափանիշներով ունի ցածր որակավորում, իսկ արտակարգ ընդունակություններով օժտված եւ աշխատասեր ուանողները, որոնք բոլոր դեպքերում հասնում են զարգացման բարձր աստիճանի, մեծամասամբ հեռանում են հայաստանից իրենց գիտելիքներին համապատասխան զարգացում եւ կիրառում գտնելու նպատակով:

5. Հայ Ժողովրդի Բարեկեցության Խնդիրը

Բոլոր ազգերն էլ ձգտում են ունենալ Ժամանակակից, կայուն բարեկեցիկ կյանք իրենց հայրենիքում, որտեղ ապահովվում է մայրենի լեզվով խոսելու իրավունքը; երկրի սահմանները վստահ պաշտպանվում են թշնամիներից; կա համեմատաբար բարձր կենսամակարդակ; բացակայում են կրիմինալ էլեմենտները եւ կոռուպցիան; զարգանում են արդյունաբերությունը եւ ժամանակակից գյուղատնտեսությունը, գիտությունը, տեխնոլոգիաները, կուլտուրան, արվեստը; կան բավարար աշխատատեղեր; գործում են ողջամիտ եւ մատչելի առողջապահական եւ սոց-ապահովման համակարգերը; տրվում է անվճար ընդհանուր կրթություն; հստակ եւ ազնիվ գործում է արդարադատության համակարգը; բոլորը հավասար են օրենքի առաջ; կա վստահություն ապագայի նկատմամբ; տնից դուրս գալով մարդիք հանդիպում են իրենց համար սովոր, հարազատ դիմագծերով անցորդների, որոնց հետ ունեն ընդհանուր սովորույթներ ու բարքեր:

Նշված պայմանների ապահովման դեպքում համարվում է որ երկիրը կայացել է եւ դարձել է տվյալ ազգի համար ռեալ Հայրենիք, ընդհանուր օջախ, որտեղ ազգը բարգավաճում է:

Բարեկեցության ապահովումը համարվում է բոլոր ազգերի գլխավոր խնդիրը:

Բարեկեցության պայմանների գնահատման չափանիշները շատ բազմազան են, սակայն կա մեկ հավաքական չափանիշ որը ճշգրիտ ցույց է տալիս թե տվյալ երկիրը բարեկեցիկ է թե ոչ, դա արտագաղթն է: Եթե կա որոշակի արտագաղթ եւ հայերը գերադասում են օտար երկրները իրենց հայրենիքից, ուրեմն այն դեռ չի կայացել եւ հիմնականում չի բավարարում Հայրենիք հասկացության կամ բարեկեցության պայմաններին:

Բազմաթիվ ազգեր եւ ժողովուրդներ Եվրոպայում, Ասիայում, Ամերիկայում ստեղծել են եւ ունեն կյանքի բարեկեցիկ պայմաններ: Բարեկեցության խնդիրը հաջող լուծել են ինչպես անկախ, այնպես էլ այդ նպատակով, բայց տարբեր հիմունքներով միավորված շատ երկրներ ու միություններ:

Ժամանակակից բարեկեցիկ կյանքի պայմանները կտրուկ տարբերվում են մեկ դար առաջվա պայմաններից իրենց բազմազանությամբ եւ ճոխությամբ: Բարեկեցության բաղադրիչների այդպիսի արագ աճը կապված է նոր տեխնոլոգիաների եւ սարքավորումների ստեղծման հետ:

Այդ բազմազանությունը ապահովելու համար շատ երկրներ, շատ ազգեր միանում են ավելի զարգացած երկրներին, իրենց անկախության մի մասը կորցնելու հաշվին, որպեսզի միացյալ ուժերով ստեղծեն ու պահպանեն իրենց երկրի բարեկեցությունը, քանի որ ազգի բարեկեցությունը ազգի գոյության գլխավոր պայմանն է, իսկ ազգը պետք է ապրի եւ գոյատեւի:

Ակնառու է որ պետությունների ցանկացած միավորում բերում է նրանց որոշ միջպետական եւ ներքին ֆունկցիաների միավորմանը: Այդպիսի միություններից կարելի է նշել՝ Եվրոպական Միությունը (ԵՄ) եւ Ռուսական Ֆեդերացիան (ՌՖ), որոնց գոյությունը հիմնականում պայմանավորված է ընդհանուր բարեկեցություն ապահովելու նկատառումներով: Չնայած միավորման տարբեր սխեմաներին, նշված այս երկու միություններում էլ մասնակից պետությունները հավասարաչափ կորցրել են իրենց անկախությունը, դրա մի մասը տալով միության ղեկավարման կենտրոնական օրգաններին:

Բարեկեցություն ստեղծելու սկզբնական էտապում հարկավոր է՝ կամ ունենալ բավական մեծ սեփական ռեսուրսներ, կամ միավորվել ավելի զարգացած պետությունների հետ բացահայտ ու կոնկրետ նկատառումներով ու պայմանագրով:

Բարեկեցության ստեղծումը սովորաբար պլանավորում, կազմակերպում եւ իրականացնում է պետությունը, բայց մեր պետությունը մինչեւ այժմ սնանկ է եւ այդ պատճառով նրա Կոնստիտուցիայի եւ գործադիր օրգանների կանոնադրության մեջ այդ մասին ոչ մի պահանջ, կամ ռեալ գործընթաց չի նախատեսնված: Այդ պատճառով մեր պետության ղեկավարները կոնկրետ պարտականություններ եւ պլաններ չեն ունեցել եւ չունեն ժողովրդի ընդհանուր բարեկեցությունը ստեղծելու եւ ապահովելու վերաբերյալ: Ապրեք ինչպես կարող եք:

Երկրում բարեկեցության ստեղծումը եւ զարգացումը պետք է լինի մեր Կոնստիտուցիայի եւ գործադիր իշխանության կանոնակարգերի առանցքային մասը եւ ապահովի նրա շուտափույթ ստեղծումը եւ զարգացումը, որպեսզի կանխվի չքավորությունը ու արտագաղթը:

Կարելի նշել, որ մեր առաջին Պրեզիդենտ Լեվոն Տեր-Պետրոսյանը, քանի որ չուներ երկրի ղեկավարման ու միջազգային հարաբերությունների փորձ եւ գիտելիքներ, պարզ չեր պատկերացնում՝ ազգի գլխավոր խնդիրը, ազգի գոյատեվման պարտադիր պայմանը, նրա անկախության էլեմենտները եւ այլն: Նա տեսնում էր Հայաստանի զարգացումը, ավելի ճիշտ՝ ապագան այլ տեսանկյունից, որը, ինչպես ցույց տվեց ժամանակը, ռեալ չէր ու չէր կարող ապահովել ազգի զարգացումը եւ նույնիսկ նրա գոյատեվումը:

ՀՀ քաղաքացի քաղաքագետ՝
Կարապետ Լազուրի

● *Հունվարի 13-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Վերջին ուսուցիչը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավական ակտի հիման վրա է իրականացվում խնամատար ընտանիք երեխաներին դաստիարակության հանձնելու գործընթացը:

Անյուտա Վիրաբյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետությունում երեխայի խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպվում է՝ ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ին հաստատված՝ «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը եւ դաստիարակությունը խնմատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման, որակավորման եւ վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը եւ չափը, խնամատարության պայմանագրերի օրինակելի ձեւերը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 751-Ն որոշման համաձայն:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին ՀՀ մարզպետարանների (Երեւանի քաղաքապետարանի) կողմից տրված դրական եզրակացությունը համարվում է խնամատար ծնող դառնալու իրավական հիմքը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Վառոու աշխատողը, որը ծնվել է 1996թ.-ին, օրենքով սահմանված կարգով, հանդիսանում է սոցիալական վճար կատարող: Տվյալ դեպքում սոցիալական վճարի հաշվարկման ի՞նչ առանձնահատկություն է սահմանված:

Կարեն Գասպարյան (58 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ 1996 թվականի հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնված անձի կողմից վճարվող սոցիալական վճարի գումարը մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ը նվազեցվում է նրա կողմից վճարման ենթակա եկամտային հարկի գումարից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտներն են աշխատավարձը, ձեռնարկատիրական եկամուտը, որպես ինքնազբաղված անձ ստացված եկամուտները: Միաժամանակ նույն օրենքի 2-րդ հոդվածում բերված են տվյալ օրենքում օգտագործվող հասկացությունները, որին համապատասխան՝ աշխատավարձը աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումները, ինչպես նաեւ պայմանագրային եկամուտն է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սեւանա լճում երկարաչանչ խեցգետինը գտնվում է ոչնչացման եզրին: Այս մասին են փաստում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի իրականացրած հետազոտությունների արդյունքները: Հետազոտություններն իրականացվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ֆինանսավորվող «Սեւանա լճում եւ նրա ջրհավաք ավազանում ձկան եւ խեցգետնի պաշարների հաշվառում» ծրագրի շրջանակներում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.01.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: